



## Հարկային նորություններ

Հունվար-մայիս 2017 թ.  
Եղի՛ր տեղեկացված

Armenian Tax update

January-May 2017  
Be in the know

**Հարկային օրենսգիրքը որպես այդպիսին ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, սակայն որոշ դրույթներ նախատեսված է ուժի մեջ մտնել 2017 թվականի հունվարի 1-ից:**

***Tax Code as such enters into force from January 1, 2018, however, certain provisions will be enforced from January 1, 2017.***

## Ավելացված արժեքի հարկ

- Տնտեսական օպերատորների կամ ՀՀ կառավարության հավանության արժանացած ծրագիր իրականացնող շահութահարկ վճարող ռեզիդենտների կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ապրանքների ներմուծումը 2017 թվականի հունվարի 1-ից ազատվում է ԱԱՀ-ից, եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները 180 օրվա ընթացքում արտահանվում են: Այս դրույթը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո կատարվող ներմուծումների վրա:
- Ածանցյալ ֆինանսական գործիքների օտարումը, փոխանցումը, փոխանակումը կամ այլ կերպ օտարումը և այդ գործարքներով նախատեսված բոլոր վճարումների կատարումն ազատվում է ԱԱՀ-ից: Նշված դրույթը չի գործում այն դեպքերում, երբ նշված գործիքների դիմաց վճարումները իրականացվում են այնպիսի գույքի փաստացի մատակարարման դիմաց, որի օտարումը ենթակա է ԱԱՀ-ով հարկման:

## Value added tax (VAT)

- From January 1, 2017, importation of goods from non-EEU member states by economic operators or profit taxpayers implementing a program approved by the RA Government shall be exempt from VAT, provided these goods, or the ones obtained in the result of processing, are exported within 180 days. This provision applies to the importations made after January 1, 2017.
- Alienation, transfer, exchange or any other form of alienation of derivatives and the payments concerning these transactions are exempt from VAT. The mentioned provision is not valid when the payments for the derivatives are made against actual supply of such property, which alienation is taxable with VAT.

## Շահութահարկ

- Պարտավորությունների հաշվանցի և (կամ) զուտացման արդյունքում օրենքով սահմանված կարգով ածանցյալ ֆինանսական գործիքների միասնական գրանցամատյանում գրանցված ածանցյալ ֆինանսական գործիքներով ստացվող վճարումները շահութահարկի հաշվարկման առումով համարվում են հարկվող եկամուտ և միաժամանակ նվազեցվում են համախառն եկամտից: Այս դրույթը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների վրա:
- Նախատեսվել է, որ ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամների համար շահութահարկով հարկվող օբյեկտ է համարվելու զուտ ակտիվների հանրագումարը և շահութահարկով հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվելու է 0,01 տոկոս դրույթաչափով:
- Փոփոխվել է ոչ ռեզիդենտ կազմակերպությունների շահաբաժինների տեսքով հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամտի իրավունքի ձեռքբերման որոշման կարգը: Այն է, շահութահարկի հարկման առումով ոչ ռեզիդենտ կազմակերպությունների շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտը կհամարվի եկամուտ բաժնետերերի (փայտատերերի) ժողովի կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթից շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման օրը, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա հունիսի 30-ը ներառյալ: Այս դրույթը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող շահաբաժինների վրա:
- Նախատեսվել է շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակ, որին կարող են անցում կատարել մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը՝ ներկայացնելով համապատասխան հայտարարություն: Այլընտրանքային տարբերակի դեպքում կանխավճարները կատարվում են նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից,

աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների 2 տոկոսի չափով:

### **Profit tax**

- For the purposes of profit tax calculation, payments received through derivative financial instruments, registered in a single register for derivative financial instruments as per the prescribed manner, because of offset and/or netting of liabilities, shall be considered taxable income and deducted from gross income. This provision applies to derivative financial instruments concluded after January 1, 2017.
- It has been envisaged, that for the Securitization Funds established on the basis of the RA law, the sum total of net assets shall be considered as object of profit tax, and the rate of profit tax base will be calculated at 0,01%.
- The procedure of determining the right of non-resident entities to receive dividends from Armenian sources was changed. That is, from the perspective of profit taxation, the dividends shall be deemed received by non-resident entities on the day when the a decision on allocation of dividends obtained in the result of activities during the reporting year is made by shareholders' (equity holders) meeting, but no later than June 30 of the tax year following the reporting year. This provision shall apply to the dividends attributed to the periods following January 1, 2017.
- An alternative method of making profit tax advance payments has been determined. It is possible to shift to this method by submitting a respective announcement by March 20 of the current year. In the case of alternative method, the advance payments shall be made in the amount equal to 2 percent of proceeds from supplied goods, provided services and/or performed work over the period of previous quarter.

### **Եկամտային հարկ**

- Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հայաստանյան աղբյուրներից ստացած շահաբաժինները այսուհետ հարկվելու են եկամտային հարկով՝ 10 տոկոս դրույթաչափով: Այնուամենայնիվ, շահաբաժինների տեսքով ստացվող եկամտից վճարված եկամտային հարկը կարող է փոխհատուցվել, եթե շահաբաժինները ստացման տարում ներդրվել են նույն կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում: Սույն դրույթը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո հայտարարված շահաբաժինների վրա:

### **Income tax**

- Dividends received by foreign citizens and persons without citizenship from sources in Armenia shall hereinafter be subject to income tax at the rate of 10 percent. However, the income tax on dividends may be compensated, if those dividends have been invested in the same Armenian resident organizations' statutory or share capital over the course of the same year of receiving dividends. This provision shall apply to the dividends declared after January 1, 2017.

### **Ակցիային հարկ**

- Հօգտագործված ակցիային դրոշմանիշերի վերադարձման ժամկետը 90 օրից երկարաձգվել է մինչև 6 ամիս: Անփոփոխ է մնացել դրոշմանիշերի վերադարձման ժամկետի երկարաձգումը՝ դիմումում նշված ժամկետով, բայց ոչ ավելի, քան 90 օրով: Այս դրույթն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից և տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ստացվող ակցիային դրոշմանիշերի վրա:

- 2017 թվականի հունվարի 1-ից բարձացվել են ակցիզային հարկի դրույքաչափերը հետևյալ ապրանքատեսակների համար.
  - ✓ ծխախոտի արտադրանքի համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է 15 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1000 հատի համար 6325 դրամ,
  - ✓ սպիրտային խմիչքների (բացառությամբ սպիրտային թրմերի և պտուղներից ու հատապտուղներից պատրաստված օղու) ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է 63 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 630 դրամ,
  - ✓ վիսկիի, ռոմի և այլ սպիրտային թրմերի ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է 57 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 3450 դրամ,
  - ✓ պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղու համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է 55 տոկոս, բայց ոչ պակաս 1 լիտրի համար 550 դրամ:

#### **Excise tax**

- The current 90-day period for return of unused excise stamps has been extended with 6-month period. The extension period for returning excise stamps for a date claimed in the application, was kept unchanged – on the date specified in application, but no longer, than 90 days. This provision shall be put into effect from January 1, 2017 and apply to the excise stamps obtained after the mentioned date.
- From January 1, 2017 excise tax rate for the following products were increased:
  - ✓ excise tax rate for tobacco products shall be determined 15 percent, but no less than 6325 AMD per 1000 pieces;
  - ✓ excise tax rate for alcohol drinks (except for spirits extracts and vodka made from fruits and berries) shall be determined 63 percent, but no less than 630 AMD per liter;
  - ✓ excise tax rate for whisky, rum and other spirits extracts shall be determined 57 percent, but no less than 3450 AMD per liter;
  - ✓ excise tax rate for vodka made from fruits and berries shall be determined 55 percent, but no less than 550 AMD per liter.

#### **«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումներ**

##### **ՀՕ-162-Ն**

Ընդունվել է 18.10.2016թ.

Ուժի մեջ է 04.05.2017թ.

Ռոյալթի վճարողներ կհանդիսանան նաև ընդերքօգտագործման թափոնների վերամշակող հանդիսացող ՀՀ և օտարերկրյա պետությունների կազմակերպությունները և ֆիզիկական անձինք:

#### **Additions to the RA Law on “Nature Protection and Nature Utilization Fees”**

##### **AL-162-N**

Adopted 18.10.2016

Enforced 04.05.2017

Armenian and foreign organizations and individual engaged in subsoil waste processing, shall be considered as royalty payers.

#### **«Պարենային և ոչ պարենային արտադրանքի գրանցում իրականացնող իրավասու մարմիններ սահմանելու մասին» ՀՀ ԿՈ 22.12.2016թ.**

##### **N1339-Ն**

Ընդունվել է 22.12.2016թ.

Ուժի մեջ է 07.01.2017թ.

Սահմանվել է, որ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված կարգով պարենային և ոչ պարենային արտադրանքի գրանցում իրականացնում են Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների միասնական ռեեստրում ներառված ու Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման նշանակված մարմինները:

**RA Government Decision "On Determining Authorized Bodies for Registration of Food and Non-Food Products"**

**N 1339-N**

Adopted 22.12.2016

Enforced 07.01.2017

It was determined, that registration of food and non-food products under the procedure defined by the technical regulations of the Eurasian Economic Union shall be carried out by the designated bodies included in the joint register of EEU certification bodies and testing laboratories, and implementing assessment of conformity to EEU technical regulations.

**«Օտարերկրյա քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների արտահանման ժամանակ ավելացված արժեքի հարկի գումարների վերադարձման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿՈ մեջ 12.12.2013թ. N1403-Ն փոփոխություններ (լրացումներ)**

**N1347-Ն**

Ընդունվել է 22.12.2016թ.

Ուժի մեջ է 01.01.2017թ.

Օտարերկրյա անձանց կողմից ԱԱՀ գումարները հետ ստանալու համար նախատեսված ապրանքների արժեքի շեմը սահմանվել է 50000 դրամ 100000 դրամի փոխարեն: Հստակեցվել է նաև, որ ԱԱՀ-ի վերադարձի հաշվում օտարերկրյա անձի անունը, ազգանունը տառասխալներով լրացնելը չի կարող ԱԱՀ գումարի վերադարձի մերժման հիմք հանդիսանալ, եթե գումարի վերադարձման համար անհրաժեշտ մյուս վավերապայմանները պահպանված են:

**RA Government Decision "On Approval of Procedure for Refund of Value Added Tax at the Export of Goods Purchased by Foreign Citizens within the Territory of RA" 12.12.2013 N1403-N amendments (additions)**

**N1347-N**

Adopted 22.12.2016

Enforced 01.01.2017

The threshold of the value of goods on which foreign citizens are entitled to VAT refund, has been determined 50000 AMD instead of 100000 AMD. It has also been clarified that misspelling of foreign entities' first and last names on the VAT refund receipt shall not serve as a basis for rejecting the refund, provided all other prerequisites for refund are met.

**«Հարկերի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումներ (փոփոխություններ)**

**ՀՕ-251-Ն**

Ընդունվել է 15.12.2016թ.

Ուժի մեջ է 09.01.2017թ.

Սահմանվել է պետական հարկի նոր տեսակ՝ դրոշմանիշային վճար:

**Addition (amendments) to the RA Law "On Taxes" AL-251-N**

Adopted 15.12.2016

Enforced 09.01.2017

A new type of state tax – stamp fee was introduced.

**«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացում  
ՀՕ-250-Ն**

Ընդունվել է 15.12.2016թ.

Ուժի մեջ է 09.01.2017թ.

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի հիման շահառուներին (զինծառայողը կամ ընտանիքի անդամները) վճարվող հատուցման գումարները եկամտային հարկի հաշվարկման առումով նվազեցվող եկամուտներ են:

**Amendment to the RA Law “On Income Tax”**

**AL-250-N**

Adopted 15.12.2016

Enforced 09.01.2017

For the purposes of income tax calculation, the contributions paid to the beneficiaries (military servants or his/her family members) on the basis of the RA Law “On Compensation of Damage Caused to the Life or Health of Military Servants during the Defense of the Republic of Armenia” shall be deemed as deductible income.

**«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացում  
ՀՕ-253-Ն**

Ընդունվել է 15.12.2016թ.

Ուժի մեջ է 09.01.2017թ.

ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված հատուցման հիմնադրամը շահութահարկ վճարող չի համարվում:

**Amendment to the RA Law on “Profit Tax”**

**AL-253-N**

Adopted 15.12.2016

Enforced 09.01.2017

The Compensation foundation established based on the RA Law “On Compensation of Damage Caused to the Life or Health of Military Servants during the Defense of the Republic of Armenia” is not considered as profit taxpayer.

**Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումներ  
(փոփոխություններ)**

**ՀՕ-264-Ն**

Ընդունվել է 15.12.2016թ.

Ուժի մեջ է 09.01.2017թ.

- 01.01.2017 թ.-ից ակցիզային դրոշմանիշներ ձեռք են բերվում Էլեկտրոնային եղանակով համապատասխան հայտ ներկայացնելու միջոցով:
- 01.01.2017թ. ծխախոտի արտադրանքի ակցիզային հարկի հարկման բազա է համարվելու ծխախոտի արտադրանքի տուփի վրա մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ ծխախոտի արտադրանքի 1000 հատը:

**Additions (amendments) to the RA Law “On Excise Tax”**

**AL-264-N**

Adopted 15.12.2016

Enforced 09.01.2017

- From 01.01.2017, excise stamps are obtained through filing electronic application.
- From 01.01.2017, the maximal retail sale price stated on the tobacco product box or 1000 pieces of tobacco product will serve as tax base for tobacco products without VAT and excise tax.

Stamp fee for individuals was determined 1000 AMD monthly. The obligation to calculate and pay stamp fee for hired employees (including individuals working on a civil-legal contract) shall be borne by tax agent. Tax agents shall pay stamp fee before the 20<sup>th</sup> of the month following the calculation of stamp fees.

**«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենք  
ՀՕ-245-Ն**

Ընդունվել է 15.12.2016թ.

Ուժի մեջ է 09.01.2017թ.

ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման նպատակով սահմանվել է դրոշմանիշային վճար: Դրոշմանիշային վճար վճարողներ են համարվում հաշվետու ժամակաշրջանում եկամուտ ստացող, մասնավորապես,

- աշխատանքային պայմանագրով ՀՀ տարածքում կամ ՀՀ տարածքից դուրս աշխատող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք,
- աշխատանքային պայմանագրով ՀՀ տարածքում աշխատող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք,
- աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով ՀՀ տարածքում կամ ՀՀ տարածքից դուրս եկամուտ ստացող՝ ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք,
- աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Դրոշմանիշային վճարը ֆիզիկական անձանց համար սահմանվել է ամսական 1000 դրամ: Վարձու աշխատողների (ներառյալ քաղաքացիական-իրավական պայմանագրերով աշխատողների) դրոշմանիշային վճարի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է հարկային գործակալը: Հարկային գործակալները դրոշմանիշային վճարը վճարում են մինչև դրոշմանիշային վճարի հաշվարկմանը հաջորդող ամսվա 20-ը:

**RA Law “On Compensation of Damage Caused to the Life or Health of Military Servants during the Defense of the Republic of Armenia”**

**AL-245-N**

Adopted 15.12.2016

Enforced 09.01.2017

To compensate for the damages caused to the life or health of military servants while defending RA, stamp fee has been introduced. Stamp fee payers include those who receive income over the reporting period, specifically:

- RA resident individuals working with employment contracts within or outside the territory of RA;
- Non-resident individuals working with employment contracts within the territory of RA;
- RA resident individuals earning income based on civil-legal contracts on providing services or performing work, within or outside the territory of RA;
- Non-resident individuals earning income from Armenian sources based on civil-legal contracts on providing services or performing work, within or outside the territory of RA.
- Stamp fee for individuals was determined 1000 AMD monthly. The obligation to calculate and pay stamp fee for hired employees (including individuals working on a civil-

legal contract) shall be borne by tax agent. Tax agents shall pay stamp fee before the 20<sup>th</sup> of the month following the calculation of stamp fees.

**ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության պետի 30.12.2016թ. NԴ/60 հրաման**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.08.2016թ. 882-Ն որոշումը հաստատվել է աշխատանքային գրքույկները (առկա տեղեկատվությունը) պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառելու նպատակով ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժիններ աշխատանքային գրքույկները ներկայացնելու ժամանակացույցը:

**Decree N Gh/60, 30.12.2016, of the Head of the RA State Social Security Service**

Taking into basis the RA Government Decision N882-N, 18.08.2016, the schedule for submitting employment record books (available information) to district offices of the RA State Social Security Service with the purpose of incorporating them in the state pension system database, has been established.

**«ՀՀ կառավարության 08.10.2003թ. N1408-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿՈ N40-Ն**

Ընդունվել է 26.01.2017թ.

Ուժի մեջ է 01.06.2017թ.

Սահմանվել է էլեկտրոնային դրամարկղային գրքի վարման կարգը: 01.01.2018թ. հունվարի 1-ից դրամարկղային գրքի վարումը կարող է իրականացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային եղանակով ստորագրված դրամարկղի մուտքի և ելքի օրդերների հիման վրա:

**RA Government Decision "On Introducing Amendments to the RA Government Decision N1408-N, 08.10.2003" N40-N**

Adopted 26.01.2017

Enforced 01.06.2017

The procedure for running electronic cash register machine book was defined. From January 1, 2018 the cash register machine book can be run electronically, on the basis of electronically signed CRM entry and exit orders.

**ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխություններ ԶՕ-39-Ն**

Ընդունվել է 09.02.2017թ.

Ուժի մեջ է 11.03.2017թ.

Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել նաև վարձավճարը պարբերաբար կամ անընդմեջ երկու անգամից ավելի չվճարելու դեպքերում:

**Amendments to the RA Civil Code**

**AL-39-N**

Adopted 09.02.2017

Enforced 11.03.2017

The tenure contract, by the request of the lessor, is subject to premature termination by the court in the event of periodic or two sequential failure to pay.

**«ՀՀ տարածքում մի մաքսային մարմնից մյուս մաքսային մարմին իրականացվող տարանցման առանձնահատկությունները սահմանելու և ՀՀ կառավարության 03.11.2005 թ. N1930-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿՈ N194-Ն**



Ընդունվել է 02.03.2017թ.

Ուժի մեջ է 24.03.2017թ.

Սահմանվել է ՀՀ տարածքում մի մաքսային մարմնից մյուս մաքսային մարմին իրականացվող տարանցման առանձնահատկությունները, մեկ մաքսային մարմնից մյուս մաքսային մարմին՝ մաքսային ձևակերպման գործընթացում գտնվող ապրանքների և տրանսպորտային միջոցների փոխադրման կարգը:

**RA Government Decision "On Defining the Specifics of Transiting from One Customs Body to Another within the Territory of RA and Repealing the RA Government Decision N1930-N, dated 03.11.2005"**

**N194-N**

Adopted 02.03.2017

Enforced 24.03.2017

The specifics of transiting from one customs body to another within the territory of RA has been defined, the procedure of moving goods and vehicles, which are still in the process of customs formalities, from one customs body to another.

**«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններ**

**ՀՕ-78-Ն**

Ընդունվել է 01.03.2017թ.

Ուժի մեջ է 15.04.2017թ.

Սահմանվել է ռոյալթի իրացման շրջանառության հաշվարկման նոր սահմանաչափը: Մասնավորապես, եթե ռոյալթի հաշվետու ժամանակաշրջանը ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ռոյալթի իրացման շրջանառությունը 20 տոկոս կամ ավելի չափով ցածր է նույն ամսվա ընթացքում մատակարարված խտանյութում մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային գների հիման վրա հաշվարկված իրացման շրջանառությունից, ապա այդ ամսվա համար իրացման շրջանառություն է համարվում մատակարարված խտանյութում պարունակվող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային միջին գների 80 տոկոսի արտադրյալը:

Ռոյալթի վճարողներն ազատվում են հասույթի վերահաշվարկման արդյունքում մինչև 2016թ. ներառյալ հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող ռոյալթիների գծով հաշվարկված տույժերից և տուգանքներից:

**Amendments to the RA Law "On Environmental and Nature Utilization Fees"**

**AL-78-N**

Adopted 01.03.2017

Enforced 15.04.2017

New threshold for calculating royalty sale turnover. In particular, if the royalty sale turnover, for each month, of royalty reporting period is 20% or lower from the ultimate concentration of metals in the concentrate supplied within the same month, and from the sale turnover calculated on the basis of international prices for the given month, then the sale turnover of that month shall be considered the product of the ultimate concentration of metals contained in the supplied concentrate and the 80% of international average prices for the given month regarding the same metals.

Royalty payers shall be exempt from the fines and penalties for the reporting periods before 2016 in the result of recalculated proceeds.

**ԱԱՀ գրոյական դրույթաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները միասնական հաշիվ մուտքագրելու պարզեցված ընթացակարգ կիրառելու համար հարկ վճարողների չափանիշները, և նշված գումարների՝ մինչև 20 միլիոն դրամի հայտերի**

**հիման վրա ԱԱՀ գումարների՝ միասնական հաշիվ մուտքագրման պարզեցված ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին» ՀՀ ԿՈ N333-Ն**

Ընդունվել է 30.03.2017թ.

Ուժի մեջ է 13.04.2017թ.

Սահմանվել է ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկվող գործարքների գծով մինչև 20 մլն դրամ ԱԱՀ-ի գումարների 2017 թվականի ընթացքում փոխհատուցման, իսկ 2018 թվականի հունվարի 1-ից՝ միասնական հաշիվ մուտքագրելու պարզեցված ընթացակարգերը:

**RA Government Decision "On Taxpayer Criteria for Applying Simplified Procedure of Entering VAT Refunds into Single Account in Respect to 0% VAT Transactions, and on Defining Simplified Procedures and Dates for Entering Value Added Tax into the Single Account based on Applications for up to 20 Million AMD"**

**N333-N**

Adopted 30.03.2017

Enforced 13.04.2017

The simplified procedures for VAT refund of up to 20 million AMD for 0% VAT transactions within 2017, and entering those into Single Account from January 1, 2018.

**Ակցիզային դրոշմանիշերը կիրառությունից հանելու վերաբերյալ ՀՀ ԿՈ N365-Ն**

Ընդունվել է 13.04.2017թ.

Ուժի մեջ է 29.04.2017թ.

2017թ. հուլիսի 1-ից կիրառությունից կհանվեն ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2013» և «2014» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը:

2018թ. հուլիսի 1-ից արգելվում է ՀՀ ներմուծված և ՀՀ-ում արտադրված՝ «2013» և «2014» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը:

**RA Government Decision on Repealing Excise Stamps**

**N365-N**

Adopted 13.04.2017

Enforced 29.04.2017

From July 1, 2017 the excise stamps dated "2013" and "2014" designed for stamping certain excisable goods manufactured and imported into the RA, will be revoked.

From July 1 2018, the sale of goods manufactured and imported into the RA, which are stamped with excise stamps dated "2013" and "2014" shall be prohibited.

**«26.10.1999թ. ՀՀ ԿՈ N662-Ն փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿՈ N412-Ն**

Ընդունվել է 20.04.2017թ.

Ուժի մեջ է 08.05.2017թ.

Ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա ներմուծվող ապրանքների ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերումն իրականացվելու է Էլեկտրոնային հայտի միջոցով:

**RA Government Decision "On Introducing Amendments to the RA Government Decision N662-N, Dated 26.10.1999"**

**N412-N**

Adopted 20.04.2017

Enforced 08.05.2017

Purchase of excise stamps for stamping imported excisable goods shall be implemented through electronic application.

**«30.10.2008թ. ՀՀ ԿՈ 1269-Ն փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿՈ N413-Ն**

Ընդունվել է 20.04.2017թ.

Ուժի մեջ է 08.05.2017թ.

Ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա ՀՀ-ում արտադրվող ապրանքների ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերումն իրականացվելու է էլեկտրոնային հայտի միջոցով:

**RA Government Decision "On Introducing Amendments to the RA Government Decision N1269-N, Dated 30.10.2008"**

**N413-N**

Adopted 20.04.2017

Enforced 08.05.2017

Purchase of excise stamps for stamping excisable goods manufactured in the RA shall be implemented through electronic application.

**«12.11.2009թ. ՀՀ ԿՈ 1308-Ն փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿՈ N427-Ն**

Ընդունվել է 20.04.2017թ.

Ուժի մեջ է 13.05.2017թ.

Փոփոխվել է ռազմական նշանակության այն արտադրանքների ցանկը, որոնց արտահանումը, ներմուծումը, տարանցիկ փոխադրումը և առևտուրը համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն:

**RA Government Decision "On Introducing Amendments and Addenda to the RA Government Decision N1308-N, Dated 12.11.2009"**

**N427-N**

Adopted 20.04.2017

Enforced 13.05.2017

Amendments were introduced to the list of those military commodities, which exportation, importation, transiting and trading is deemed to be subject to licensing.

**«29.12.2005թ. ՀՀ ԿՈ 2335-Ն փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿՈ N428-Ն**

Ընդունվել է 20.04.2017թ.

Ուժի մեջ է 13.05.2017թ.

Մասնավորապես սահմանվել է, որ աշխատանքի հիմնական վայրից 30 կմ-ից ավել հեռավորությամբ այլ վայր մեկնելու և նույն օրը վերադառնալու դեպքում նախատեսել ոչ միայն ճանապարհածախսի, այլ նաև օրապահիկի հատուցում:

**RA Government Decision " On Introducing Amendments and Addenda to the RA Government Decision N2335-N, Dated 29.12.2005"**

**N428-N**

Adopted 20.04.2017

Enforced 13.05.2017

It has been determined, that in case of traveling to a site with distance of over 30 km from main work place and returning on the same day, not only the travel costs, but also a subsistence allowance shall be provided.

**«Հարկային ստուգման արդյունքում հարկային մարմինների կողմից վերահաշվարկված հասույթի մեծությանը համապատասխան հաշվարկված ռոյալթիի վճարման ժամանակացույցի կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ N 472-Ն**

Ընդունվել է 20.04.2017թ.

Ուժի մեջ է 18.05.2017թ.

Սահմանվել է հարկային ստուգման արդյունքում վերահաշվարկված հասույթի արդյունքում առաջացած ռոյալթիի վճարման ժամանակացույցի կարգը: Մասնավորապես, ռոյալթի վճարողի ընտրությամբ ռոյալթիի վճարումը կարող է իրականացվել հաստատուն կամ ճկուն ժամկետներով:

**RA Government Decision "On Defining the Procedure for the Payment Schedule of Royalties Estimated according to the Size of Recalculated Proceeds by the Tax Authorities in the Result of Tax Audit"**

**N472-N**

Adopted 20.04.2017

Enforced 13.05.2017

The procedure for payment schedule of royalties generated due to recalculated proceeds in the result of tax audit has been defined. In particular, the royalty payer may choose to pay the royalty in fixed or floating timelines.

**Տեղեկագրում ներկայացված ինֆորմացիայի վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում, խնդրում ենք կապվեք մեր հայաստանյան Դելոյթ ընկերության մասնագետների հետ.**

**If you have any questions regarding the information provided in this newsletter, please contact one of the professionals at our Deloitte office in Armenia:**

**Արփինե Ղևոնդյան**  
**Arpine Ghevondyan**

**Արուս Ոսկանյան**  
**Arus Voskanyan**

**Տնօրեն**  
**Director**

**Հարկային բաժնի ավագ խորհրդատու**  
**Senior assistant of tax department**

[aghevondyan@deloitte.am](mailto:aghevondyan@deloitte.am)  
հեռ.+374 (10) 52 65 20 (ն. 6060)

[avoskanyan@deloitte.am](mailto:avoskanyan@deloitte.am)  
հեռ.+374 (10) 52 65 20 (ն. 6021)

Call +374 (10) 52 65 20 (ext. 6060)

Call +374 (10) 52 65 20 (ext. 6021)



[deloitte.am](http://deloitte.am)

Deloitte refers to one or more of Deloitte Touche Tohmatsu Limited, a UK private company limited by guarantee ("DTTL"), its network of member firms, and their related entities. DTTL and each of its member firms are legally separate and independent entities. DTTL (also referred to as "Deloitte Global") does not provide services to clients.

Please see [www.deloitte.com/about](http://www.deloitte.com/about) for a more detailed description of DTTL and its member firms.

Deloitte provides audit, consulting, financial advisory, risk management, tax and related services to public and private clients spanning multiple industries. Deloitte serves four out of five Fortune Global 500® companies through a globally connected network of member firms in more than 150 countries bringing world-class capabilities, insights, and high-quality service to address clients' most complex business challenges. To learn more about how Deloitte's approximately 244,000 professionals make an impact that matters, please connect with us on [Facebook](#), [LinkedIn](#), or [Twitter](#).

This communication contains general information only, and none of Deloitte Touche Tohmatsu Limited, its member firms, or their related entities (collectively, the "Deloitte Network") is, by means of this communication, rendering professional advice or services. Before making any decision or taking any action that may affect your finances or your business, you should consult a qualified professional adviser. No entity in the Deloitte Network shall be responsible for any loss whatsoever sustained by any person who relies on this communication.

© 2017 Deloitte & Touche LLC. All rights reserved.